# Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (№ 10)**

28 օգոստոսի 2015թ. ժամը՝ $15^{00}$

1. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Երեմյան խցերի կահավորում» ծրագրի մասին:

(Արմեն Գրիգորյան)

2. Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի կողմից իրականացվող «Մեկ երեխա - մեկ համակարգիչ» ծրագրի մասին:

(Գոռ Գասպարյան)

3. «ԿԱՉԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի Շերամի անվան թիվ 5 երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի շենքի վերակառուցում» ծրագրի մասին:

(Մելինե Սարգսյան)

4. «Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Անհայտ կորածների ընտանիքների և այլ խոցելի խմբերի տների վերականգնում» ծրագրի մասին:

(Աշոտ Եղիազարյան)

## 5. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին

(Արման Բարխուդարյան)

5.1 «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

5.2 «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (**N 1**):

5.3 «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (**N 2**):

5.4 «Երիտասարդական ալիք» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին:

5.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 18-ի N Մ-664-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):

5.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-717-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին **N 1** («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):



5.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-717-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին **N 2** («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):

5.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):

5.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-134-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ):

5.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին **N 4** («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր):

5.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատվածծրագրում լրացում կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ):

## 6. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին

(Արման Բարխուդարյան)

6.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Տաթևի վերածնունդ» հիմնադրամ):

6.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ):

6.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված շրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն):

6.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաս-

տատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն):

6.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ՝ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ):

6.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մարտի 14-ի N Մ-201-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգելու և նույն ծրագրին հարակից գործարքների մասին (Հայաստանի Հանրապետության «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ):

## 7. Այլ հարցեր

7.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 8-ի N Մ-402-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն):

7.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-588-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն):

7.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-809-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ):

***ՆԱԽԱԳԻԾ***

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

--------օգոստոսի 2015 թվականի N Մ- - Ա Մ-10/1

քաղ. Երևան

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ « ԵՐԵՄՅԱՆ ԽՑԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ » ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի -ի N 07/80-2/-15 և օգոստոսի -ի N06/3-3/-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի օգոստոսի -ի N 02/14/-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 3,432,000 դրամ արժողությամբ «Երեմյան խցերի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վալենսիա» Հ/Ձ ՍՊԸ-ը հետ (ՀՎՀՀ՝ 08835704) 2014 թվականի դեկտեմբերի 5-ին (Համաձայնագիր թիվ 1, 2015 թվականի հուլիսի 27-ին) կնքված՝ N 14Գ/014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրասենյակային աթոռների մատակարարում՝ 3,432,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Վարչատնտեսական բաժնի տնօրեն

Մուշեղ եպիսկոպոս Բաբայան

«19» օգոստոս 2015 թ.

## Երեմյան խցերի կահավորում

## ԾՐԱԳԻՐ

Մ-10/1

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Երեմյան խցերը կահավորել գրասենյակային աթոռներով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 3,432,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հոգևորականները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 20 դեկտեմբեր 2014թ. – 21 սեպտեմբեր 2015թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Երեմյան խցերի կահավորում գրասենյակային աթոռներով՝ 3,432,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Վալենսիա» ՍՊԸ-ի կողմից (ՀՎՀՀ 08835704 , ՀՀ, Ք. Երևան, Մյասնիկյան 40 փ.)՝ պայմանագիր կնքված 05.12.2014թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 20 դեկտեմբեր 2014թ. – 21 սեպտեմբեր 2015թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Երեմյան խցերի կահավորում գրասենյակային աթոռներով՝ 3,432,000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական բաժնի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

06/3-3/22290-15
25.08.2015թ

Ա·10/1

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 24.08.2015թ. թիվ 15/15.9/14438-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Երեմյան խցերի կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում հայտնում եմ.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծրագրի 8-րդ կետում ծրագրի մեկնարկման ժամկետ է նշված 2014թ. դեկտեմբերի 20-ը, ուստի անհրաժեշտ են պարզաբանումներ որոշման նախագիծը ներկայումս հաստատման ներկայացնելու պատճառների վերաբերյալ:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544648

034/27137-15
25.08.2015թ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ա·10/1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

27.08.2015թ № 07/80-2/23214-

Ձեր № ____________________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 24.08.2015թ. N 15/15.9/14438-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Երեմյան խցերի կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 011 910-437

034/27326-15
27.08.2015թ

## ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Երեւան խցերի կախավում» ծրագրի մասին որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ՝<br>հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծրագրի 8-րդ կետում ծրագրի մեկնարկման ժամկետ է նշված 2014թ. դեկտեմբերի 20-ը, ուստի անհրաժեշտ են պարզաբանումներ որոշման նախագիծը ներկայումս հաստատման ներկայացնելու պատճառների վերաբերյալ: | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից ներկայացվել է պարզաբանում (կցվում է): |
| | |
| | |

---


ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Հեռ. /+374 10/ 517-142 Ֆաքս /+374 10/ 517-301Էլ. փոստ varchatntesakan@etchmiadzin.am


№ 653

27 օգոստոս, 2015թ.

ՄԵԾԱՐԳՈ
ՏԻԱՐ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
Երևան

Մեծարգո Պրն. Տեր-Սիմոնյան,

Ի պատասխան ՀՀ Ֆինանսների նախարարության 25 օգոստոս 2015 թվականի թիվ 06/3-3/22890-15 գրության, տեղեկացնում ենք, որ «Երեմյան խցերի կախավորում» ծրագրի շրջանակներում կային որոշակի պարզաբանումների կարիք, որոնցից թերևս ամենակարևորը գույքի ներկրումն էր Հայաստան, այժմ բոլոր խնդիրները հարթված են, այդ իսկ պատճառով այն նոր է ներկայացվում ԱԱՀ-ից ազատվելու համար:

Առ Աստված աղոթքով մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, գործունեության հաջողություններ և ամենայն բարիք:

Օրհնությամբ՝

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 107-27422
27 08 2015թ.

*ՆԱԽԱԳԻԾ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ օգոստոսի 2015 թվականի N Մ- -Ա *Մ-10/2*

քաղ. Երևան

## ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԵԿ ԵՐԵԽԱ - ՄԵԿ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի -ի N 07/80-2/-15 և օգոստոսի -ի N 0/-/-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի օգոստոսի -ի N 02//-15 ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի օգոստոսի -ի N /-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոստոմի 29/164, ՀՎՀՀ՝ 02537635) իրականացվող՝ 93,534,712.70 դրամ ընդհանուր արժողությամբ «Մեկ երեխա - մեկ համակարգիչ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի կողմից ազատ տնտեսական գոտում գործող «Թեքնոլոջի ընդ սայնս դայնամիքս» ՍՊԸ-ից ձեռք բերված «Արմթաբ» դյուրակիր համակարգիչները (739 հատ՝ 195,835 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզպետին:

*Մ-10/*

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

**Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի գործադիր տնօրեն՝**

**Կարինե Հարությունյան**

**« 20 » օգոստոսի 2015 թ.**

02537635 ՀԻՄՆԱԴՐԱՄ FUND TEXTBOOK AND INFORMATION COMMUNICATION TECHNOLOGIES

## «Մեկ երեխա-մեկ համակարգիչ » ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման միջոցով հանրակրթության կրթության որակի, մատչելիության և արդիականության բարձրացման նպատակի համար, ՀՀ կառավարությունը 2015 թվականի ապրիլի 9-ի N 15 արձանագրային որոշմամբ հաստատել է <<Առաջին դասարանի աշակերտներին անվճար համակարգիչ տրամադրելու՝ <<Մեկ երեխա-մեկ համակարգիչ>> փորձնական ծրագիրը և փորձնական փուլի նկարագիրը>>: Ծրագրի նպատակն է առաջին դասարանի աշակերտներին անվճար համակարգիչ տրամադրելու՝ <<Մեկ երեխա-մեկ համակարգիչ>> փուլային ծրագրի փորձնական փուլի ընթացքում ՀՀ Վայոց Ձորի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տարրական դասարանների աշակերտներին և դասվարներին անհատույց պլանշետների տրամադրումը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամ ( ք.Երևան, Ռոստոմի 29/164, ՀՎՀՀ 02537635 ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամ ( ք.Երևան, Ռոստոմի 29/164, ՀՎՀՀ 02537635 ) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայոց Ձորի մարզ, պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ, |

| | | |
|---|---|---|
| 6. | Ծրագրի բյուջեն | կրթության բնագավառ: 93 534 712, 70 (իննսուներեք միլիոն հինգ հարյուր երեսունչորս հազար յոթ հարյուր տասներկու դրամ յոթանասուն լումա) ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Վայոց Ձորի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների 1-ից 4-րդ դասարանների աշակերտներ և դասվարներ (շահառուների ցանկը կցվում է Հավելված 1): |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2015 օգոստոսի 19-ից մինչև հոկտեմբերի 30-ը: Ծրագիրը կրելու է շարունակական բնույթ՝ առաջիկա չորս տարվա համար: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015թ-ի ընթացքում 739 հատ պլանշետների՝ իրենց երկկողմանի պաշտպանիչ պատյաններով, գնում 93 534 712,70 (իննսուներեք միլիոն հինգ հարյուր երեսունչորս հազար յոթ հարյուր տասներկու դրամ յոթանասուն լումա) ՀՀ դրամի չափով: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նախատեսվում է ազատ տնտեսական գոտում գրանցված <<Թեքնոլոջի ընդ Սայնս Դայնամիքս>> ՍՊԸ-ից ձեռք բերել 739 հատ 93 534 712,70 ՀՀ դրամ գումարի չափով Արմճար պլանշետներ իրենց երկկողմանի պաշտպանիչ պատյաններով: Ակնկալվում է ԱԱՀ-ից, մաքսային տուրքերից և այլ պարտադիր վճարներից արտոնություն: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն ու Վայոց Ձորի մարզպետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի կառավարումը հանդիսանում է ՀՀ կրթության և գիտության նախարարության լիազորությունը, ըստ այդմ կստեղծվի Ծրագրի կառավարման աշխատանքային խումբ: Ծրագրի վերահսկման նպատակով կմշակվեն մշտադիտարկման մեխանիզմներ: Փորձնական փուլի ավարտին կիրականացվի արդյունքների ամփոփում և կպատրաստվի ամփոփ հաշվետվություն: Բացի այդ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով կներկայացվի հաշվետվություն ծրագրի կատարման ընթացքի մասին: |

Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների մասնագետ՝ Նունե Դավթյան

Հավելված 1

Վայոց Ձորի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ցանկը

| N | Անունը | Հասցեն | Դասվարների թիվը | Աշակերտների քանակը |
|---|---|---|---|---|
| 1 | ք. Եղեգնաձորի Հ.Հովհաննիսյանի անվ. թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ | ք. Եղեգնաձոր, Նարեկացու 12 | 3 | 75 |
| 2 | ք. Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ | ք. Եղեգնաձոր, Վայքի 4 | 2 | 65 |
| 3 | գ. Ագարակաձորի Յու. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Ագարակաձոր, փ.1, շենք 1 | 1 | 10 |
| 4 | գ. Աղավնաձորի Գ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Աղավնաձոր փ. 3, 33 շենք | 1 | 18 |
| 5 | գ. Անգաձորի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Անգաձոր | 1 | 8 |
| 6 | գ. Արենիի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Արենի | 1 | 28 |
| 7 | գ. Արտաբույնքի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Արտաբույնք | 1 | 13 |
| 8 | գ. Արփիի Վ. Լևոնյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Արփի փող. 1 շինություն 21 | 1 | 15 |
| 9 | գ. Գետափի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Գետափ | 1 | 24 |
| 10 | գ. Գլաձորի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Գլաձոր | 1 | 30 |
| 11 | գ. Մոզրովի հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ. Մոզրով | 1 | 1 |
| 12 | գ. Գողթանիկի հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ. Գողթանիկ | 1 | 3 |
| 13 | գ. Ելփինի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Ելփին | 1 | 6 |
| 14 | գ. Եղեգիսի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Եղեգիս կենտրոնական փ. 2 | 1 | 3 |
| 15 | գ. Թառաթումբի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Թառաթումբ | 1 | 2 |
| 16 | գ. Խաչիկի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Խաչիկ | 1 | 9 |
| 17 | գ. Հերմոնի հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ. Հերմոն | 1 | 1 |
| 18 | գ. Հորբատեղի հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ. Հորբատեղ | 1 | 3 |
| 19 | գ. Հորսի հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ. Հորս | 0 | 0 |
| 20 | գ. Մալիշկայի Մ. Լոմոնոսովի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Մալիշկա | 1 | 23 |
| 21 | գ. Մալիշկայի թիվ 1 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Մալիշկա,փ. 8, շենք 76 | 1 | 28 |
| 22 | գ. Շատինի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Շատին | 1 | 24 |
| 23 | գ. Չիվայի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Չիվա փ. 5, շենք 9 | 1 | 7 |
| 24 | գ. Ռինդի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Ռինդ | 1 | 14 |
| 25 | գ. Սալլիի հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ. Սալլի | 1 | 4 |
| 26 | գ. Վարդահովիտի հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ. Վարդահովիտ | 1 | 2 |
| 27 | գ. Վերնաշենի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Վերնաշեն Թանահատի փ. N | 1 | 9 |
| 28 | գ. Քարագլխի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Քարագլուխ, փ. 6, շենք 2 | 1 | 9 |
| 29 | Ջերմուկի Մ. Գորկիի անվան թիվ 1հիմնական դպրոց ՊՈԱԿ | ք. Ջերմուկ, Շահումյան 7 | 2 | 60 |
| 30 | Ջերմուկի թիվ 3 հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ. Կեչուտ | 1 | 35 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| [illegible] | ք. Վայքի թիվ 2 [illegible] դպրոց ՊՈԱԿ | | | |
| 32 | գ. Ազատեկի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | ք. Վայք, Այավերդյան 17 | 3 | 89 |
| 33 | գ. Արինի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Ազատեկ | 1 | 5 |
| 34 | գ. Արտավանի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Արին | 1 | 4 |
| 35 | գ. Բարձրունու միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | Գ Արտավան փ. 5, տուն 1 | 1 | 3 |
| 36 | գ. Գնդեվազի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Բարձրունի | 1 | 1 |
| 37 | գ. Գոմքի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Գնդեվազ | 1 | 2 |
| 38 | գ. Զառիթափի Ա.Մելիքյանի անվ. միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Գոմք | 1 | 3 |
| 39 | գ. Ջերմուկի հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ. Զառիթափ | 1 | 30 |
| 40 | գ. Խնձորուտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Ջերմուկ | 0 | 0 |
| 41 | գ. Կարմրաշենի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Խնձորուտ | 1 | 5 |
| 42 | գ. Հերհերի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Կարմրաշեն 2-րդ փ., շենք 2 | 1 | 2 |
| 43 | գ. Մարտիրոսի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Հերհեր | 1 | 6 |
| 44 | գ. [illegible]արավանի հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ. Մարտիրոս | 1 | 8 |
| 45 | գ. [illegible]ի հիմնական դպրոց ՊՈԱԿ | 3 փողոց 25 | 1 | 4 |
| Ընդամենը | | գ. Սերս | 0 | 0 |
| | | | 48 | 691 |

№ 10/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

№ 10/2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

25.08.2015թ. № 07/80-2/22980

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 21.08.2015թ. N 15/15.6/14381-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի կողմից իրականացվող «Մեկ երեխա - մեկ համակարգիչ» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, առաջարկում ենք խմբագրել ներկայացված որոշման նախագծի 4-րդ կետը և ներառել նաև ՀՀ կրթության և գիտության նախարարությանը:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ.. 011 910-437

034/27190-15
25.08.2015թ

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**օգոստոսի 2015 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

Ա/ 10/3

**«ԿԱԶԱ» ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՐԱՄԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի -ի N 3/3.8-2/-15 և N, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի օգոստոսի -ի N -15, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2015 թվականի օգոստոսի -ի N, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 205 թվականի օգոստոսի -ի N և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի օգոստոսի -ի N -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Թումանյան 24, բն. 5, ՀՎՀՀ՝ 02554941) իրականացվող՝ 150,000,000 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի Շերամի անվան թիվ 5 երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի շենքի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՀՈՒՆ-ՍԱՎ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536528) 2015 թվականի հուլիսի 18-ին կնքված՝ N K-Cher-P&D/A-36 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասասենյակների վերակառուցման և վերականգնման աշխատանքների հեղինակային հսկողության իրականացում՝ 276,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀՈՒՆ-ՍԱՎ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536528) 2015 թվականի հուլիսի 18-ին կնքված՝ N K-Cher-P&D/A-35 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասասե-

Ա/ 10/2

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի կողմից իրականացվող «Մեկ երեխա - մեկ համակարգիչ» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ** | |
| առաջարկում ենք խմբագրել ներկայացված որոշման նախագծի 4-րդ կետը և ներառել նաև ՀՀ կրթության և գիտության նախարարությանը: | Հաշվի է առնվել: |

նակների վերակառուցման և վերականգնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության իրականացում՝ 960,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՄԵԾՆ ԷՐԻԿ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05502622) 2015 թվականի հուլիսի 18-ին կնքված՝ N K-Cher-MEric/C-34 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասասենյակների վերակառուցման և վերականգնման աշխատանքների իրականացում՝ 30,533,244 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3. «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի

տնօրեն Անահիտ Մինասյանի կողմից

---

« 26 » օգոստոս, 2015թ.

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՐԱՄԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ-ի ՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի 20 նոյեմբերի N Մ-811-Ա որոշմամբ «ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի Շերամի անվան թիվ 5 երաժշտական դպրոցի վերակառուցում» ծրագիրը որակվել է բարեգործական: Սույն ծրագրի նպատակն է ավարտին հասցնել 19-րդ դարի 2-րդ կեսի պատմամշակութային ճարտարապետական կառույց հանդիսացող ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի Շերամի անվան թիվ 5 երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի շենքի վերակառուցման աշխատանքները, ինչպես նաև հնարավորություն տալ աշակերտներին և ուսուցիչներին իրենց ուսումն ու աշխատանքը շարունակելու առավել բարենպաստ պայմաններում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Կոմիտաս Շվեյցարիա- Հայաստան բարեգործական միություն (Komitas Action Suisse-Armenie) -Ռոզիերի 7, բ. Լոզան 1012, Շվեյցարիա |
| 4. | Ծրագիրը կատարողը | «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ (ՀՀ, ք. Երևան, Թումանյան 24, բն. 5, ՀՎՀՀ՝ 02554941) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջե | Ծրագրի բյուջեն կազմում է մոտ 150,000,000 (հարյուր հիսուն միլիոն) դրամ: Ծրագիրը ֆինանսավորվում է «Կոմիտաս» Շվեյցարիա- Հայաստան բարեգործական միության կողմից: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարան: Բարեգործություն ստացողի ընտրությունը կատարվել է Բարեգործի կողմից: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Սկիզբը՝ 2015 թվականի հուլիս, ավարտը՝ 2017 թվականի դեկտեմբեր: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 3 փուլով: Յուրաքանչյուր փուլում կատարվելու են վերակառուցման և վերականգնման համաշինարարական աշխատանքներ դպրոցի տարբեր հատվածներում. I փուլ՝ 2015 թվականի հուլիս-նոյեմբեր - Դպրոցի հարավ-արևելյան հատվածի վերակառուցում (հիմքերի ջրամեկուսացում և որմնախարիսխի երեսապատում բազալտե սալիկներով), թվով 6 դասասենյակների |

| | | |
|---|---|---|
| | | վերակառուցում և հարդարում, դահլիճի վերականգնվող մասի ջրահեռացման ներքին ցանցի ստեղծման աշխատանքներ: Նախատեսվող արժեքը՝ մոտ 35,000,000 (երեսունհինգ միլիոն) դրամ:<br>II փուլ՝ 2016 թվականի ապրիլ - 2016 թվականի դեկտեմբեր (այս փուլում հնարավոր է նաև ենթափուլեր՝ կախված դրամական միջոցների տրամադրման ժամանակացույցից) - Նախատեսվում է վերակառուցել կառույցի հարավ-արևելյան հատվածը՝ դահլիճը: Նախատեսվող արժեքը՝ մոտ 30,000,000 (երեսուն միլիոն) դրամ:<br>III փուլ՝ 2017 թվականի հունվար-դեկտեմբեր - Նախատեսվում է վերակառուցել կառույցի հարավ-արևելյան մասի բակային հատվածը, ամբողջական արտաքին քարերի վերականգնման (ռեստավրացիա) տարբեր փուլերում իրականացված հատվածների միացումը միջանցքով: Արտաքին կոյուղու միացում (արտատարածքային): Բարեկարգման աշխատանքների իրականացում՝ հենապատերի, դպրոցի ամբողջ տարածքի բարեկարգման արտաքին մակերևույթների ստեղծում, կանաչապատում: Նախատեսվող արժեքը՝ մոտ 80,000,000 (ութսուն միլիոն) դրամ:<br>Վերակառուցման աշխատանքների ընթացքում նախատեսվում է նաև շինարարության որակի տեխնիկական և հեղինակային վերահսկողություն՝ 5,000,000 (հինգ միլիոն) դրամ ընդհանուր արժողությամբ: |
| 10. | Ձեռք բերվելիք ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Վերակառուցման ընթացքում նախատեսվում է.<br>1. Համաշինարարական աշխատանքներ, ներքին ինժեներական կոմունիկացիաներ (կցակառույցների քանդում, հիմքերի ուժեղացում և ջրամեկուսացում, նոր հատակների իրականացում, օդափոխության համակարգի ստեղծում, նոր դռների և պատուհանների տեղադրում, ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ,արտաքին և ներքին աստիճանների երեսապատում, ջրամատակարարման և կոյուղու ներքին ցանց, լոկալ ջեռուցման և օդափոխության համակարգի ստեղծում, արտաքին պատերի հիմնանորոգում)՝ 106,000,000 (հարյուր վեց միլիոն) դրամ ընդհանուր արժողությամբ:<br>2. Ջրահեռացման արտաքին ցանց՝ 4,000,000 (չորս միլիոն) դրամ ընդհանուր արժողությամբ:<br>3. Տեղանքի հարթեցում և բարեկարգում՝ 35,000,000 (երեսունհինգ միլիոն) դրամ ընդհանուր արժողությամբ:<br>Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է շինարարության որակի տեխնիկական և հեղինակային վերահսկողություն՝ 5,000,000 (հինգ միլիոն) դրամ ընդհանուր արժողությամբ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Ծրագրի բյուջեում մեջ չեն ներառվում ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների գործակալության և Գյումրու քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, Կոմիտաս Շվեյցարիա-Հայաստան բարեգործական միության կողմից: |

Ծրագիրը կազմեց՝ Ասատրյան Մերին (ազգանունը, անունը) (ստորագրություն)

Կ.Տ.

դ.10/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

դ.10/3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

31.07.15թ. № 07/80-2/20327

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.07.2015թ. N 15/15.6/13046-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի Շերամի անվան թիվ 5 երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի շենքի վերակառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ նախագծին կից ներկայացված ծրագրի 9-րդ կետում նշված անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը չի համապատասխանում ծրագրի 6-րդ կետում նախատեսված 150,000,000 դրամ ծրագրի բյուջեին:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան/

Կատարող՝ Ն.Կարապետյան
հեռ. 011 910-437

31.07.15թ
№ 034/24742-15

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

N: 06/3-3/20453-15
31.07.2015թ.

Հր-10/3

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 29.07.2015թ. N15/15.6/13046-15 գրությանը կից ներկայացված ««ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի Շերամի անվան թիվ 5 երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի շենքի վերակառուցում» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ն.Բաժանյան
011-800-329

034/24940-15
31.07.2015թ.

---

Հր-10/3

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078, Երևան, Հալաբյան 41ա, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

30.07.15թ N 02/14/9253-15
Ձեր N ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 29-ի 15/15.6/13046-15 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի Շերամի անվան թիվ 5 երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի շենքի վերակառուցում» ծրագիրը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» N 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող՝ Աստղիկ Վարդանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ.՝ (010) 380-227

30.07.15թ.
N 035/24730-15

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ

N 01/3.1/4043-15 "03" 08 2015 թ.

Ա-10/3

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պրն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2015 թ. հուլիսի 29-ի N 5/15.6/13046-15 գրության՝ հայտնում ենք, որ «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի Շերամի անվան թիվ 5 երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի շենքի վերակառուցում» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ չունենք և առաջարկում ենք այն որակել որպես բարեգործական:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ անհրաժեշտ է երաժշտական դպրոցի շենքի վերանորոգման էսքիզային նախագիծը և ճարտարապետահատակագծային առաջադրանքը համաձայնեցնել ՀՀ մշակույթի նախարարության հետ:

Հարգանքով՝

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

Մշակութային ծրագրերի և մոնիթորինգի վարչություն
Կատ.՝ Ռ. Ղլեչյան
Հեռ.՝ 011-56-40-50

021/25019-15
03.08.2015թ.

0010, Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 93 49, ֆաքս/факс/fax (374 10) 52 39 22,
0010, Ереван, Площадь Республики, Дом правительства 3, Government Building 3, Republic Square, Yerevan 0010,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010. ք.Երևան. Հանրապետության հր.
Կառավարության տուն 3
Ֆաքս +374 011 62 17 34
www.minurban.am
E-mail: info@minurban.am

05.08.2015թ. N 05/23/4378-15

Ա-10/3

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն ՏԵՐ- ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

2015 թվականի հուլիսի 29-ի
N 15/15.6/13046-15 գրություն

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի Շերամի անվան N 5 երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի շենքի վերակառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունն առարկություն չունի:

Հարգանքով՝ Հակոբ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Կատարող՝ Կառուցապատման ներդրումային ծրագրերի վարչության պետ Արթուր Սարգսյանց
հեռ. 011-621-710

027/25358-15
05.08.2015թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ


«30» հուլիս 2015թ.
N: 01/3860-15

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16 ձև-10/3
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77


ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

*Ձեր՝ 29.07.2015թ.*
*թիվ՝ 15/15.6/13046-15*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԿԱՉԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի Շերամի անվան թիվ 5 երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի շենքի վերակառուցում» ծրագրի մասին» որոշման նախագիծը:

Մարզպետարանը ևս կարևորում և գնահատում է ծրագրի նշանակությունը և չի առարկում այն բարեգործական որակելուն:

Հարգանքով՝ Ֆ.ՑՈՒԼԱԿՅԱՆ


կատ Հ.Արշակյան
/0312 3-16-26/


30. 07. 15թ.
№ 116/24702-15

ձև 10/3

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԿԱՉԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի Շերամի անվան թիվ 5 երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի շենքի վերակառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ | |
| նախագծին կից ներկայացված ծրագրի 9-րդ կետում նշված անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը չի համապատասխանում ծրագրի 6-րդ կետում նախատեսված 150,000,000 դրամ ծրագրի բյուջեին | Հաշվի է առնվել, ծրագիրը լրամշակվել է: |

«ԿԱՍԱ» ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
"KASA" FONDATION HUMANITAIRE SUISSE
Komitas Action Suisse-Arménie
Թումանյան 24, բն. 5, 0001 Երևան Հայաստան 24, rue Toumanian, apt.5, 0001 Erévan Arménie
E-mail: kasaam@kasa.am / www.kasa.am

ա․ 10/3

N Ն-2608 «26» օգոստոսի 2015թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ Սիմոն Տեր-Սիմոնյանին

Պատճենը՝ ՀՀ ֆինանսների նախարարի
տեղեկալ-գլխավոր գանձապետ
Ատոմ Ջանջուղազյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության 31.07.2015թ. N 07/80-2/20327-15 գրության, կից Ձեզ է ուղարկվում «ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի Շերամի անվան թիվ 5 երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի շենքի վերակառուցում» ծրագրի լրամշակված տարբերակը՝ որում հաշվի են առնվել վերոնշյալ գրությամբ արված դիտողությունը:

Ի պատասխան ՀՀ մշակույթի նախարարության 03.08.2015թ. N 01/3.1/4043-15 գրության, տեղեկացնում ենք, որ հաշվի կառնվի նախարարության կարծիքը և երաժշտական դպրոցի շենքի վերանորոգման էսքիզային նախագիծը և ճարտարապետահատակագծային առաջադրանքը կհամաձայնեցվի մշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության հետ:

Հարգանքով՝

Հիմնադրամի տնօրեն Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

2589

«ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ»
Մուտք թիվ 094-27333
«27» 08 2015թ.

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**հունիսի 2015 թվականի N Մ -885- Ա**
**քաղ. Երևան**

ա․ 10/4

**ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՖՈՒԼԵՐ ՏՆԱՇԻՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ՏՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի -ի N 07/80-2/ -15 և հունիսի -ի N 06/3-3/ -15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունիսի -ի N 02/14/ -15, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2015 թվականի հունիսի -ի N -15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի հունիսի -ի N ՖԲ/ԱնՄ-2-1/ -15 ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2015 թվականի հունիսի -ի N / -15 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել «Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական հասարարական կազմակերպության կողմից իրականացվող՝ 300,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Անհայտ կորածների ընտանիքների և այլ խոցելի խմբերի տների վերականգնում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական հասարարական կազմակերպության կողմից կնքված (քաղ. Երևան, Կոմիտասի 59, ՀՎՀՀ՝ 01009537)՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Կարմիր խաչի» միջազգային կոմիտեի հայաստանյան պատվիրակության հետ (ՀՎՀՀ՝ 00025274) 2015 թվականի մայիսի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Toyota Land Cruiser Hardtop DieselHZJ76L մակնիշի ավտոմեքենայի (2009 թվականի արտադրության, թափքի համարը՝ JTEEB71J907006558) ձեռքբերում՝ 3,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական հասարարական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի

պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ֆուլեր Տնաշինական Կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության Նախագահ Ա. Եղիազարյանի կողմից

«01» մայիսի 2015թ.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ОБЩЕСТВЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ 01009537

« Անհայտ կորածների ընտանիքների և այլ խոցելի խմբերի տների վերակառուցման» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ տարածքում անհայտ կորածների ընտանիքների և այլ խոցելի խմբերի բնակարանային պայմանների բարելավում: |
Ձեր 21.08.2015թ. N15/15.6/14371-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ն.Բեժանյան
011-800-329

034/27074-15
25.08.2015թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ օգոստոսի 2015 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N Մ-134-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 22-ի N 07/80-2/19443-15 և օգոստոսի -ի N 06/-/-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի օգոստոսի -ի N ՖԲ/ԱնՄ-/4-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված բրինձը (880 տեղ, 22,088 կգ ընդհանուր քաշով, 38,580 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 5,800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արապատյան» ՏՄ, բաշխման ցանկը կցվում է) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-134-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետներին:

### *Բեռի բաշխման ցանկ*

ինվոյս P-D185471 09.08.2015

| N N | Ապրանքի անվանումը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բրինձ | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 370 | 659 |
| | | | Այգուտ | 164 | 832 | 1,459 |
| | | | Մարտունի | 73 | 370 | 650 |
| | | | Դպրաբակ | 81 | 410 | 721 |
| | | | Վահան | 188 | 950 | 1,673 |
| | | | Կալավան | 23 | 116 | 205 |
| | | | Բարեպատ | 6 | 30 | 53 |
| | | | Ջորավանք | 31 | 155 | 276 |
| | | | Անտառամեջ | 22 | 110 | 196 |
| | | | Գավառ | 61 | 309 | 543 |
| | | | Թթուջուր | 81 | 410 | 721 |
| | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 257 | 454 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 86 | 151 |
| | | | Արտաշատ | 16 | 81 | 142 |
| | | | Գետազատ | 39 | 195 | 347 |
| | | | Մրգանուշ | 16 | 81 | 142 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 66 | 116 |
| | | | Սևաբերդ | 41 | 208 | 365 |
| | | | Ջրառատ | 18 | 90 | 160 |
| | | | Աբովյան | 38 | 192 | 338 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 244 | 427 |
| | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 76 | 133 |
| | | | Իջևան | 18 | 92 | 160 |
| | | Երևան | 3201 | | 16270 | 28,486 |
| | Ընդամենը | | 4335 | | 22000 | 38,580 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն՝ Վ. Ամալյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ա. 10/5.9

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

25.08.2015թ. №07/80-2/22981-15

Ձեր № ______________________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 21.08.2015թ. N 15/15.6/14373-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-134-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 011 910-438

034/27192-15
25.08.2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

№ 06/3-3/22734-15
24.08.2015թ.
ա. 10/5.9

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 21.08.2015թ. N15/15.6/14373-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-134-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ն.Բեժանյան
011-800-329

034/26983-15
24.08.2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

մր-10/5.9

«25» 08 2015 թ. N ՖՄ/ԱՇԻՐ-2-1/7521-15

Ձեր 2015-08-21, 15/15.6/14373-15

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-134-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

Կատարող՝ Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչություն 581-680

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

040/24185-15
25.08.2015թ.

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

**28 օգոստոսի 2015 թվականի N Մ- -Ա** մր-10/5.10

**ք. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**

(«ՀՀ-ում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (4)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 27-ի N 07/80-2/23306-15 և օգոստոսի 26-ի N 06/3-3/23113-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի օգոստոսի 25-ի N ԱՄ/15/9866-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռը (թեսթ-հավաքածուներ՝ 1 տեղ, 10.5 կգ ընդհանուր քաշով, 3,035.17 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Ջվարթնոց» Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-776-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ա · 10/5.10

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

27.08.15թ № 07/08-2/23306-15

Ձեր № ____________________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 24.08.2015թ. N 15/15.4/14459-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (4)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 011 910-438

N034/27414-15
27.08.15թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

N 06/3-3/23113-15
26.08.15թ Ա · 10/5.10

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 24.08.2015թ. N15/15.4/14459-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (4) որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ն.Բեժանյան
011-800-329

N034/27260-15
26.08.15թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am


25.08.15 N ԱՆ/15/9866-15

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան 24.08.2015թ. թիվ 15/15.4/14459-15 Ձեր գրության հայտնում եմ, որ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ


Կատարող՝
ՀՀ ԱՆ ԳՀ ԾՀԽ
Ա.Բերեգովսկայա
Հեռ.՝ 543650


N 020/27202-15
25.08.15թ

---

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**օգոստոսի 2015 թվականի N Մ-887-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի -ի N 07/80-2/ -15 և օգոստոսի -ի N 6/3-3/ -15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-648-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-744-Ա և օգոստոսի 28-ի N Մ-880-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 5.1 ենթակետում ավելացնել «հեռահաղորդակցության, հակահրդեհային և տեսահսկման համակարգերի ապրանքներ» բառերը:

2. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից Ռուսաստանի Դաշնությունում ձեռք բերված չորս խմբաքանակ հեռահաղորդակցության, հակահրդեհային և տեսահսկման համակարգերի ապրանքները ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) 560 կգ ընդհանուր քաշով, 5,895.84 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը.

2) 800 կգ ընդհանուր քաշով, 1,532,95 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը.

3) 49.20 կգ ընդհանուր քաշով, 673.22 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը.

4) 575.49 կգ ընդհանուր քաշով, 20,591.86 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

Հր. 10/5.11


0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ. (+374 60) 700 255


27.08.15 № 07/80-21

Ձեր № 23307-15

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 24.08.2015թ. N 15/15.1/14445-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան


Կատարող՝ Ս. Այվազյան

Հեռ. 011 910-438


034/27413-15

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

Հր. 10/5.11


Երևան-010, Մելիք-Ադամյան 1.


06/3-3/23320-15
27.08.15

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 24.08.2015թ. N 15/15.1/14445-15 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 26.06.2015թ. N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրով հեռահաղորդակցության, հակահրդեհային և տեսահսկման համակարգերի ներմուծում նախատեսված չէ, հետևաբար նշված ապրանքները չեն կարող ներմուծվել ծրագրի շրջանակներում: Ելնելով վերոգրյալից առաջարկում եմ համապատասխան փոփոխություն կատարել ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում:

Հարգանքով

**Վ. Միրումյան**


Կատարող՝ ԳՄՀՄ բաժին

Հեռ. 011.800.329


034/27424-15

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**26 հունիսի 2015 թվականի N Մ- 648 - Ա**

**քաղ. Երևան**

## «ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (3-ՐԴ ՓՈՒԼ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 24-ի N 07/80-2/16508-15 և հունիսի 25-ի N 6/3-3/16531-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հունիսի 25-ի N 02/14/7609-15, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2015 թվականի հունիսի 24-ի N 05/23/3415-15 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի հունիսի 24-ի N 1/06/815-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի (ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 10/2, ՀՎՀՀ՝ 02706151) կողմից իրականացվող՝ 1,665,954,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագիրը (3-րդ փուլ) (ծրագիրը կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01529671) 2015 թվականի մայիսի 15-ին կնքված N 19 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունիսի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը պահնորդական ծառայությունների մատուցում՝ 3,150,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Էներգոսիստեմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01252685) 2015 թվականի մայիսի 20-ին կնքված N 18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրամոնտաժային աշխատանքների իրականացում՝ 67,834,221 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Մոսկովյան ինվեստիցիոն շինարարական ընկերություն – ք. Երևան» ԱՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02573694) 2015 թվականի հունիսի 1-ին կնքված N 01/06/2015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ինժեներատեխնիկական վերահսկողության իրականացում՝ 3,304,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Դելտապրո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00113358) 2015 թվականի հունիսի 2-ին կնքված N 02/06/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հավելվածում նշված աշխատանքների իրականացում՝ 68,008,782 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Այրունեթվորքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02588485) 2015 թվականի հունիսի 3-ին կնքված N 20 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կապի, հակահրդեհային ահազանգման, տեսահսկման և հեռուստատեսային համակարգերի մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 7,245,465 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Հատուկ սանտեխմոնտաժ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03503214) 2015 թվականի հունիսի 4-ին կնքված N 21 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սանտեխնիկական աշխատանքների իրականացում՝ 29,297,220 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Շինմեքմեխ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01810377) 2015 թվականի հունիսի 8-ին կնքված N 23 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղական կոնստրուկցիաների պատրաստում և տեղադրում՝ 1,246,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Մետրոշինվերանորոգում» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02200317) 2015 թվականի հունիսի 15-ին կնքված N 25 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համաշինարարական աշխատանքների իրականացում՝ 175,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Հատուկ սանտեխմոնտաժ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03503214) 2015 թվականի հունիսի 15-ին կնքված N 26 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կաթսայատան, օդորակման և ջեռուցման աշխատանքների իրականացում՝ 90,838,901 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության նախարարություն ու Երևանի քաղաքապետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

"Բարեկեցություն" բարեգործական հիմնադրամի ...

"15" հունիսի 2015 թ.

Մարզաառողջարարական համալիրի կառուցում

Ծրագիր ( 3-րդ փուլ)

| | |
|---|---|
| Ծրագրի նպատակը | ՀՀ ք.Երևանում «500 հանդիսատեսի համար սահադաշտով մարզաառողջարարական համալիր»-ի նախագծային, հեղինակային և տեխնիկական հսկողության, ինժեներական համակարգի և համաշինարարական աշխատանքների, ապրանքների ներմուծման և ձեռք բերման իրականացում |
| Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում նախատեսում են օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենքով սահմանված արտոնություններից |
| Բարեգործը | "Բարեկեցություն" բարեգործական հիմնադրամ (ք.Երևան, Հյուսիսային պողոտա, 10/2, հեռ. 50 01 73 ՀՎՀՀ 02706151) |
| Ծրագրի կատարողը | "Բարեկեցություն" բարեգործական հիմնադրամ (ք.Երևան, Հյուսիսային պողոտա, 10/2, հեռ. 50 01 73 ՀՎՀՀ 02706151) |
| Ծրագրի իրականացման վայրը և բնակավայրը | ՀՀ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 27/10 քաղաքաշինություն |
| Ծրագրի բյուջեն | 1 665 954 000 /մեկ միլիարդ վեց հարյուր վաթսունհինգ միլիոն ինը հարյուր հիսունչորս հազար/ դրամ |
| Բարեգործություն ստացողը | Երևանի համայնք |
| Ծրագրի իրականացման տևողությունը | 15.06.2015թ. - 30.11.2015թ. |

| | | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ԳՈՒՄԱՐ /ՀՀ դրամ/ | ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ |
|---|---|---|---|---|
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Նախագծային, հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքներ (տող 1 + տող 2) մինչև 30.11.2015թ | 12 604 000 | |
| | | 2. Համաշինարարական և ինժեներական համակարգի աշխատանքներ (տող 3+ տող 4) մինչև 30.11.2015թ | 676 550 000 | |
| | | 3. Շինարարական ապրանքների և սարքավորումների ներմուծում (տող 5) մինչև 30.11.2015թ | 755 300 000 | |
| | | 4. Շինարարական և այլ ապրանքների ձեռք բերում (տող 6) մինչև 30.11.2015թ | 215 700 000 | |
| | | 5. Կազմակերպչական ծախսեր մինչև 30.11.2015թ | 5 800 000 | |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 1 665 954 000 | |
| 10 | Ձեռք բերվող /ներմուծվող/ ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ԳՈՒՄԱՐ /ՀՀ դրամ/ | ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ |
| | | 1. Նախագծային աշխատանք /հատուկ նշանակության/ | 4 500 000 | «Արբակ և որդիներ» ՍՊԸ |
| | | 2. Հեղինակային հսկողության /4,8 մլն.դր./ և տեխնիկական հսկողության /3,304 մլն.դր./ աշխատանքներ | 8 104 000 | «Արբակ և որդիներ» ՍՊԸ «ՄԻՇԸ» ՍՊԸ |
| | | 3. Համաշինարարական աշխատանքներ, այդ թվում՝ | 410 600 000 | |
| | | 3.1 սանտեխմոնտաժային աշխատանքներ | 29 300 000 | «Հատուկսանտեխմոնտաժ» ՓԲԸ |
| | | 3.2 դռների և լուսամուտների պատրաստում և տեղադրում | 68 000 000 | «Դելտապրո» ՍՊԸ |
| | | 3.3 տանիքի ջրամեկուսացման աշխատանքներ | 7 500 000 | «Գիզա» ՍՊԸ |
| | | 3.4 մետաղական կոնստրուկցիաների պատրաստման և տեղադրման աշխատանքներ | 18 000 000 | «Շինմեքենի» ՍՊԸ |
| | | 3.5 գազատարի անցկացման աշխատանքներ | 19 800 000 | «ԳազԼենԳրուպ» ՍՊԸ |
| | | 3.6 իզի պանելների տեղադրման աշխատանքներ | 3 000 000 | «Սուրգաի» ՍՊԸ |
| | | 3.4 համաշինարարական այլ աշխատանքներ | 265 000 000 | «Մետրոշինվերանորոգում» ՓԲԸ |
| | | 4. Ինժեներական համակարգի աշխատանքներ, այդ թվում՝ | 265 950 000 | |
| | | 4.1 էներգոհամակարգի աշխատանքներ | 68 000 000 | «Էներգոսիստեմ» ՍՊԸ |
| | | 4.2 ցածր լարման աշխատանքներ /հակահրդեհ.ահազանգման, հեռուստատեսուբ.,հեռախոս/ | 7 300 000 | «Այլյունեքվորքս» ՍՊԸ |
| | | 4.3 կաթսայատան հովացման և սառեցման աշխատանքներ | 160 000 000 | «Հատուկսանտեխմոնտաժ» ՓԲԸ |
| | | 4.4 ծայնային ապահովման համակարգի մոնտաժման աշխատանքներ | 2 500 000 | «Սատրոն» ՍՊԸ |
| | | 4.5 սառցապատման սարքավորումների տեղադրման աշխատանքներ | 25 000 000 | |
| | | 4.6 պահանորդային ծառայություն | 3 150 000 | «Արմորիկ» ՓԲԸ |
| | | 5. Ներմուծում, այդ թվում՝ | 755 300 000 | |
| | | 5.1 Սարքավորումներ էներգոհամակարգի, սառեցման և հովացման համակարգի, սառցապատրաստման սարքավորումն. | 755 300 000 | |
| | | 6. Ձեռք բերում, այդ թվում՝ | 215 700 000 | |
| | | 6.1 շին. ապրանքներ /ցեմենտ, ամրան, խիճ, ավազ, բազալտե սալ, հարդարման պարագաներ և այլ/ | 215 700 000 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | 1. աշխատավարձ | 4 000 000 | |
| | | 2. այլ ծախսեր | 1 800 000 | |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 5 800 000 | |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Երևանի քաղաքապետարան | | |
| 13 | Ծրագրի արդյունավետության գնահատման վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման արդյունքները հանձնման-ընդունման միջոցով, սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին | | |

Գլխ. հաշվապահ Դ.Վարդանյան

ԳՏ-10/

ԳՏ-8/2

"ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ" ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Հյուսիսային պողոտա 10-2
Հեռ./Ֆաքս +374 10 500172 e-mail: tempo2006@yandex.ru

FUND CHARITABLE "BAREKETSUTYUN"
10-2 North ave.
0010 Yerevan, Republic of Armenia
Tel/Fax +374 10 500172
e-mail: tempo2006@yandex.ru

ФОНД БЛАГОТВОРИТЕЛЬНЫЙ "БАРЕКЕЦУТЮН"
Республика Армения
г. Ереван 0010, Северный просп. 10-2
Тел/Факс +374 10 500172
e-mail: tempo2006@yandex.ru

N 54 "28" օգոստոսի 2015թ.

Հայաստանի Հանրապետության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ
պրն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 27-ի N 06/3-3/23320-15 գրությունը, խնդրում ենք Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 հունիսի 26-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 5.1 ենթակետում ավելացնել «հեռահաղորդակցության, հակահրդեհային և տեսահսկման համակարգերի ապրանքներ» բառերը:

Կանխավ շնորհակալ ենք

Տնօրեն Հ. Զիրչյան

2597

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 094-27470
«28» 08 2015թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրում լրացում կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը՝ | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն -25.08.15, N 07/80-2/22904-15 | |
| ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 26.06.2015թ. N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրով հեռահաղորդակցության, հակահրդեհային և տեսահսկման համակարգերի ներմուծում նախատեսված չէ, հետևաբար նշված ապրանքները չեն կարող ներմուծվել ծրագրի շրջանակներում: Ելնելով վերոգրյալից առաջարկում եմ համապատասխան փոփոխություն կատարել ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում | Առաջարկությունը ընդունվել է: Ծրագրում կատարված է համապատասխան լրացում |

Ա. 10/5.11

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**օգոստոսի 2015 թվականի N Մ - 886 - Ա**

**քաղ. Երևան**

ն. 10/6.1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՏԱԹԵՎԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի -ի N 07/80-2/ -15 և օգոստոսի-ի N 6/3-3/ -15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ոսմար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09208107) 2015 թվականի օգոստոսի 3-ին կնքված N 0311-030815 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 2,942,984 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հախվերդյան Շինմոնտաժ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00014348) 2015 թվականի օգոստոսի 6-ին կնքված N 0243-260615 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված գույքի ձեռքբերում՝ 536,963 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

ն. 10/6.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

25.08.15 № 07/80-2/
Ձեր № 22943-15

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 20.08.2015թ. N 15/15.1/14282-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Տաթևի վերածնունդ» հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ վերախմբագրման կարիք ունի նախագծի 1-ին կետի 2) ենթակետը, քանի որ նախագծում նշված գործարքի նպատակը չի համապատասխանում կից ներկայացված «Տաթևի վերածնունդ» հիմնադրամ և «Հախվերդյան Շինմոնտաժ» ԲԲԸ-ի միջև կնքված պայմանագրի նպատակի հետ:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն.Կարապետյան
հեռ. 011 910-437

034/27186-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

06/3-3/22452-15
20.08.15
Ա·10/6.1

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 20.08.2015թ. թիվ 15/15.1/14282-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Տաթևի վերածնունդ» հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ա. Բաբսեղյան
հեռ. 011 800329

034/26793-15

Ա·10/6.1

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Տաթևի վերածնունդ» հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը՝ | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն –25.08.15, N 07/80-2/22943-15 | |
| Վերախմբագրման կարիք ունի նախագծի 1-ին կետի 2) ենթակետը, քանի որ նախագծում նշված գործարքի նպատակը չի համապատասխանում կից ներկայացված «Տաթևի վերածնունդ» հիմնադրամ և «Հախվերդյան Շինմոնտաժ» ԲԲԸ-ի միջև կնքված պայմանագրի նպատակի հետ | Առաջարկությունը հաշվի է առնվել, կցված է նախագծի լրամշակված տարբերակը |

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**օգոստոսի 2015 թվականի N Մ-888-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի -ի N 07/80-2/ -15 և օգոստոսի -ի N 06/3-3/ -15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-648-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-744-Ա և **օգոստոսի 28-ի N Մ-880-Ա որոշումների խմբագրությամբ**) որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 9-րդ կետի 2-րդ ենթակետերում «676,550,000 դրամ» բառերը փոխարինել «739,550,000 դրամ» բառերով.

2) 9-րդ կետի 3-րդ ենթակետերում «755,300,000 դրամ» բառերը փոխարինել «692,300,000 դրամ» բառերով.

3) 10-րդ կետի 3-րդ ենթակետերում «412,600,000 դրամ» բառերը փոխարինել «435,600,000 դրամ» բառերով.

4) 10-րդ կետում ավելացնել 3.7 ենթակետը «շինարարական այլ աշխատանքներ՝ 23,000,000 դրամ» բառերը.

5) 10-րդ կետի 4-րդ ենթակետերում «263,950,000 դրամ» բառերը փոխարինել «303,950,000 դրամ» բառերով.

6) 10-րդ կետի 4.3 ենթակետերում «160,000,000 դրամ» բառերը փոխարինել «200,000,000 դրամ» բառերով.

7) 10-րդ կետի 5-րդ ենթակետերում «755,300,000 դրամ» բառերը փոխարինել «692,300,000 դրամ» բառերով.

8) 10-րդ կետի 5.1 ենթակետերում «755,300,000 դրամ» բառերը փոխարինել «692,300,000 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջի Սի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02588184) 2015 թվականի օգոստոսի 18-ին կնքված N 37/Մ եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պորտլանդ ցեմենտի մատակարարում՝ 4,853,296 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ա. 10/6.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

25.08.15 № 07/80-2?

Ձեր № 22904-15

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 19.08.2015թ. N 15/15.1/14252-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու ու նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ վերախմբագրման կարիք ունեն նախագծի 1-ին կետի 3) և 5) ենթակետերը, քանի որ նախագծում նշված գումարները չեն համապատասխանում վերը նշված որոշմամբ հաստատված ծրագրում նշված միջոցառումների համար նախատեսված համապատասխան գումարների հետ:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն.Կարապետյան
հեռ. 011 910-437

034/27157-15

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

06/3-3/22453-15
20.08.15

ա. 10/6.2

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 19.08.2015թ. թիվ 15/15.1/14252-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳՄՀՄ բաժին, Ա. Բաբսեղյան
հեռ. 011 800329

034/26792-15

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը՝ | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն -25.08.15, N 07/80-2/22904-15 | |
| Վերախմբագրման կարիք ունեն նախագծի 1-ին կետի 3) և 5) ենթակետերը, քանի որ նախագծում նշված գումարները չեն համապատասխանում վերը նշված որոշմամբ հաստատված ծրագրում նշված միջոցառումների համար նախատեսված համապատասխան գումարների հետ | Վերախմբագրման կարիք չկա, քանի որ այս նիստի հիմնական օրակարգով դրված է նախագիծ ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին նույն կետերում (հիմնական օրակարգի 14.25 կետը) |

Ա-10/6.2

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ օգոստոսի 2015 թվականի N Մ- -Ա** Ա-10/6.3
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի -ի N 07/80-2/-15 և օգոստոսի -ի N 06/-/-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-040-Ա և փետրվարի 25-ի N Մ-153-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԳԻՋԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00851914) 2015 թվականի հուլիսի 10-ին կնքված՝ N 1/AGG պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինմոնտաժային աշխատանքների իրականացում՝ 2,048,505 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ)
Հայաստանի ներկայացուցչության տնօրենի
պաշտոնակատար Օհանես Եորդեկյանի կողմից

«06» օգոստոսի 2015թ.

«Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Մելիք Ադամյան 2/2 հասցեում 1307,51 քմ հողատարածքում կառուցել սփյուռքի համահայկական խոշորագույն կազմակերպություններից մեկի՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Երևանյան կենտրոնատեղի և Երևան քաղաքին պատկանող ստորգետնյա ավտոկայանատեղի՝ ՀՀ կառավարության համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Անհատ սփյուռքահայ բարերարներ պարոն Պերճ Սեդրակյան (հասցե՝ 191 Cedar Street, Englewood NJ 07631, ԱՄՆ) և պարոն Նազար Նազարյան (հասցե՝ 147 Demarest Avenue, Englewood, Cliffs NJ 07632, ԱՄՆ): |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Երևան քաղաք, Մելիք Ադամյան փողոց 2/2՝ քաղաքաշինության բնագավառը: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 4,132,200,000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ-ում ՀԲԸՄ-ի կողմից իրականացվող բարեգործական ծրագրերի շահառու հանդիսացող բոլոր անձիք,<br>- ՀԲԸՄ Վիրտուալ Հայկական համալսարանն իր ծրագրավորման և դասավանդման բաժիններով,<br>- երիտասարդական ծրագրերը,<br>- «Բացահայտիր Հայաստանը» անչափահաս սփյուռքահայ երեխաների Հայաստան այցելության և կամավոր աշխատանքի ծրագիրը,<br>- «Անդրանիկ» սկաուտական ջանակումի ամենամյա կազմակերպման ծրագիրը ՀՀ Լոռու մարզում,<br>- սփյուռքահայերի համար նախատեսված ներգնա ամառային պրակտիկայի ծրագրերը,<br>- Հայաստանում սկաուտական շարժման ծրագիրը,<br>- «Ուսուցում արտասահմանում» հայազգի ուսանողների համար ծրագիրը,<br>- ՀԲԸՄ հարյուրամյա պատմությանը և գործունեությանը նվիրված թանգարան -արխիվը,<br>- ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության գրասենյակը:<br>ՀՀ Երևանի քաղաքապետարան (ստորգետնյա ավտոկայանատեղի): |

3 / 10 / 6

2

| | | | |
|---|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է սկսել 2010 թվականի դեկտեմբերին և ավարտել 2015 թվականի նոյեմբեր ամսին: | |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Աշխատանքները ընթանալու են հետևյալ փուլերով.<br>ա) Շենքի ճարտարապետական նախագծերի (էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի համար) նախագծում (2010թ. դեկտեմբեր - 2011թ. հունիս ամիսների ընթացքում) և հեղինակային վերահսկողություն (2011թ. հունիս - 2013թ. մայիս ամիսների ընթացքում) - 52,200,000 դրամ:<br>բ) տարածքում գտնվող ենթակառույցների (կոմունիկացիոն ցանցերի, ենթակայանների և այլն) տեղափոխման աշխատանքներ, որը նախատեսվում է իրականացնել 2010թ. դեկտեմբեր - 2011թ. սեպտեմբեր ամիսների ընթացքում - 65,524,826 դրամ:<br>գ) Էլեկտրաենրակայանի շենքի կառուցման աշխատանքներ, որը նախատեսվում է իրականացնել 2011թ. փետրվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում - 28,605,920 դրամ<br>դ) Հողային աշխատանքներ և Երևան քաղաքի ստորգետնյա ավտոկայանատեղերի շինարարության աշխատանքները, որը նախատեսվում է իրականացնել մինչև 2012թ. ապրիլ ամիսը - 252,399,660 դրամ:<br>ե) Շենքի ընդհանուր շինարարական աշխատանքները՝ ներառյալ շենքի արտաքին տեսքի վերակազմման, ջերմամեկուսիչ արտաքին ապակե պատերի կառուցում, շենքի կառավարման էլեկտրոնային համակարգ, ներքին հարդարման աշխատանքներ, կահավորանք և այլն, որոնք նախատեսվում է ավարտին հասցնել 2015 թվականի նոյեմբերին - 3,733,469,594 դրամ: | |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Նարեկ Սարգսյան ճարտարապետական արվեստանոց» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01550435) հետ կնքված պայմանագրի շրջանակներում ՀԲԸՄ Երևանյան կենտրոնատեղիի էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի ճարտարապետական նախագծերի կազմում: | 52,200,000 դրամ |
| | | Կոմունիկացիոն ցանցերի մալուխների տեղափոխման նպատակով ենթակառույցների (կոմունիկացիոն ցանցերի, ենթակայանների, գազի, մետրոպոլիտենի ցանցերի մալուխների և այլն) տեղափոխման աշխատանքների իրականացում: | 65,524,826 դրամ |
| | | Էլեկտրաենրակայանի շենքի կառուցման աշխատանքներ, որի համար պայմանագիր է կնքվել «Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ: | 28,605,920 դրամ |
| | | Հողային աշխատանքներ և ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցում, որը իր մեջ ներառում է Երևանի քաղաքապետարանին պատկանող ավտոկայանատեղերի կառուցում ՀՀ կառավարության համար: | 252,399,660 դրամ |
